# Որակի կառավարման համակարգեր

GLOBALG.A.P & FSSC 22000

# GLOBALG.A.P. (EurepGAP)

- Մշակվել է 1997 թվականին որպես **EurepGAP**
- **<u>Ընդհանուր նպատակն է</u>** ապահովել անվտանգ և կայուն գյուղատնտեսական ապրանքների արտադրություն՝ հաշվի առնելով սպառողների անվտանգ սննդամթերք ունենալու ցանկությունը
- Ներկայումս ֆերմերային տնտեսությունների սերտիֆիկացման ամենատարածված համակարգն է

# GLOBALG.A.P. (EurepGAP)

- Մշակվել է HACCP-ի ուղեցույցերի հիման վրա և զուգորդվում է HACCP-ի ներդրմամբ:
- Սերտիֆիկացումն իր մեջ ներառում է
    - Սննդամթերքի անվտանգությունը
    - Էկոլոգիական վտանգի նվազեցումը (ներառյալ կենսաբազմազանությունը)
    - Աշխատողների առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունը
    - Կենդանիների բարօրությունը
    - Վնասատուների ինտեգրված կառավարումը (IPM)
    - Բուսաբուծության ինտեգրված կառավարումը (ICM)
    - Որակի կառավարման համակարգ
- Այլոց թվում պահանջում է նաև արտադրության արդյունավետություն, բարելավում է բիզնեսի վարման ընթացակարգերը, նվազեցնում է կենսական ռեսուրսների վատնումը

# FSSC 22000 FOOD SAFETY SYSTEM CERTIFICATION- ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Ենթադրում է սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի աուդիտի և հավաստագրման ամբողջական սերտիֆիկացման սխեմա
- Օգտագործում է ISO 22000, ISO 9001, ISO/TS 22003, ISO/TS 22002-1 (սննդամթերքի անվտանգության նախապայմանային ծրագրեր) ստանդարտները և այլ լրացուցիչ պահանջներ
- Կիրառվում է սննդամթերքի արժեշղթայի բոլոր փուլերում՝ առաջնային գյուղատնտեսությունից մինչև վաճառք

# FSSC 22000 FOOD SAFETY SYSTEM CERTIFICATION- ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Բավարարում է Սննդամթերքի անվտանգության համաշխարհային նախաձեռնության բոլոր պահանջներին՝ այսինքն համապատասխանում է ամենաբարձր ստանդարտներին
- Ընդունված է հավաստագրման մարմինների կողմից
- Հավաստագիրը հավաստում է տվյալ կազմակերպության սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի համապատասխանությունը համակարգի պահանջներին
- Ընդունված է մանրածախ առևտրային ցանցերի կողմից